# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՀՀ-ԱՄ-ԱՎՏՈ-ԲԸԱՀԾՁԲ-16/01>>

ք. Աշտարակ <<2 >> Հունվարի 2016 թ.

<<ՀՀ Արագածոտնի մարզպետարանը>>, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ____2___ օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից __2___օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **990000 (ինը հարյուր իննսուն հազար )** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016 թ.:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հանգամանքներն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է _14__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀԱրագածոտնի մարզպետարան
ՀՀԱրագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
ՀՎՀՀ 05004247
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար
Հ.Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Կարկոմավտոսերվիս>> ՍՊԸ
Ք.Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
HSBC բանկ
Հ/հ 002-121630-001
ՀՎՀՀ 00131374
<<Կարկոմավտոսերվիս>> ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Հովսեփյան

/ստորագրություն/
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար ձեռք է բերվում Նիսան Տիանա, Մերսեդես Բենց C280, Վազ-21214 և Վազ 2106 մակնիշի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություն:

**Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 /դիագնոստիկա/, SU-2 /վերանորոգում/ծառայությունների Գնացուցակ**

| Հ/Հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | ՎԱԶ 2106 | ՎԱԶ 21214 | Նիսան Տեանա | Մերսեդես |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | *SU-1 ներառվող ծառայությունների անվանում* | | | Այլ պետությունների արտադրության մեքենաներ | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3000 | 3000 | 5000 | 5000 |
| 2 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 3000 | 3000 | 5000 | 5000 |
| 3 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3000 | 3000 | 5000 | 5000 |
| 4 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 5 | Շարժիչի հանում և տեղադրում | 25000 | 25000 | 100000 | 30000 |
| 6 | Շարժիչի վերանորոգում | 60000 | 60000 | 150000 | 20000 |
| 7 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 1500 | 2000 | 8000 | 7000 |
| 8 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 30000 | 10000 |
| 9 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 15000 | 15000 | 40000 | 30000 |
| | 2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | | |
| 11 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1100 | 1100 | 3000 | 2000 |
| 13 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | | 15000 | 30000 | 30000 |
| 16 | Խարնարակի հանում և տեղադրում | 2000 | [redacted] | | |
| 17 | Խարնարակի վերանորոգում | 6000 | | | |
| 18 | Օդի զտիչի փոխարինում | 1000 | 1000 | 1000 | 2000 |
| 19 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | [redacted] | 9000 | 15000 | 0000 |
| 20 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | | 9000 | 15000 | 2000 |
| 21 | Բենզամղիչի փոխարինում | 4000 | 8000 | 15000 | 5000 |
| 22 | Վառելիքի զտիչի փոխարինում | 1000 | 8000 | 15000 | 5000 |
| | 3. Սառեցման և արտածման համակարգ | | | | |
| 24 | Փոկի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 3000 | 5000 |
| 25 | Ջովիարի հանում և տեղադրում | 3000 | 5000 | 8000 | 3000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | Ռադիատորի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 12000 | | 10000 | |
| 28 | Թերմոստատի փոխարինում | 3000 | 3000 | 10000 | | 10000 | |
| 29 | Ջրի պոմպի փոխարինում | 4000 | 6000 | 18000 | | 15000 | |
| 31 | Ընդարձակող բաքի փոխարինում | 1000 | 1000 | 2000 | | 4000 | |
| 32 | Խլարարի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 5000 | | 4000 | |
| 33 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 3000 | | 2000 | |
| | 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | | | | | |
| 34 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | 2000 | 2000 | [redacted] | | 7000 | |
| 36 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 9000 | 10000 | [redacted] | | 30000 | |
| 39 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 9000 | 10000 | 60000 | | 30000 | |
| 40 | ՓՏ-ի վերանորոգում | 10000 | 10000 | [redacted] | | 100000 | |
| 41 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | [redacted] | [redacted] | 15000 | | 10000 | |
| | 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | | | | | |
| 42 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | [redacted] | 6000 | [redacted] | [redacted] | [redacted] | |
| 43 | Բաշխիչ տուփի վերանորոգում | [redacted] | 12000 | [redacted] | [redacted] | [redacted] | |
| 44 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 2000 | 2000 | [redacted] | | 8000 | |
| 45 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | 2000 | 2000 | [redacted] | | 2000 | |
| 46 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում | 2000 | [redacted] | [redacted] | | 2000 | |
| | 6. Առջևի և հետևի կամրջակներ | | | | | | |
| 47 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 15000 | 15000 | [redacted] | | 20000 | |
| 48 | Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում | 10000 | 10000 | [redacted] | | 30000 | |
| 49 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | 2000 | 2000 | [redacted] | | 5000 | |
| 50 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 1000 | 1000 | [redacted] | | 1000 | |
| | 7. Կախոց | | | | | | |
| 51 | Տրավերսի հանում և տեղադրում | 9000 | 15000 | 30000 | | 20000 | |
| 52 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | [redacted] | 6000 | 7000 | | 6000 | |
| 53 | Անվակունդի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 10000 | | 10000 | |
| 54 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 3500 | 3500 | 3500 | | 3500 | |
| 55 | Զսպանակի հանում և տեղադրում | 2000 | 3000 | 5000 | | 5000 | |
| 56 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 1500 | 1500 | 5000 | | 5000 | |
| 57 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 3000 | 4000 | 10000 | | 6000 | |
| 58 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 1000 | 1000 | 2000 | | 2000 | |
| 59 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 2000 | 2000 | 4000 | | 5000 | |
| 60 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 4000 | | 5000 | |
| 61 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 1500 | 1500 | [redacted] | | 5000 | |
| 62 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 2000 | 2000 | [redacted] | | 5000 | |
| 63 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 1000 | 1000 | [redacted] | | 2000 | |
| 64 | Գնդե հոդակապերի փոխարինում | 1500 | 1500 | 5000 | | 5000 | |
| 65 | Ծայրականների հանում և տեղադրում | 1000 | 1000 | 4000 | | 4000 | |
| 66 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 5000 | | 6000 | |
| 67 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 1000 | 1000 | 5000 | | 4000 | |
| 68 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 1500 | 1500 | 5000 | | 7000 | |
| 69 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 1000 | 1000 | [redacted] | | 4000 | |
| 70 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | [redacted] | [redacted] | 3000 | | 3000 | |
| 71 | Անվաբացքի կարգավորում | 6000 | 6000 | 12000 | | 2000 | |
| | 8. Ղեկային մեխանիզմ | | | | | | |
| 72 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 7000 | 7000 | 20000 | | 5000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 73 | Դեկային կալունի վերանորոգում | 8000 | 8000 | 50000 | 50000 |
| | **9. Արգելակային համակարգ** | | | | |
| 74 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 8000 | 8000 |
| 76 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 7000 | 7500 | 15000 | 10000 |
| 77 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 2500 | 2500 | [redacted] | 2000 |
| 79 | Արգելակային համակարգի օդահանում | 2000 | 2000 | 3000 | 2000 |
| 80 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 4000 | 4000 |
| 81 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | [redacted] | | 4000 | 4000 |
| 84 | Արգելակային փողրակի փոխարինում | 2000 | 2000 | 3000 | 3000 |
| 85 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 2000 | 2000 | 4000 | 4000 |
| 86 | Հետևի կոճղակների փոխարինում | 3000 | 3000 | 4000 | 4000 |
| 87 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 2000 | 2000 | 5000 | 5000 |
| 88 | Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում տեղադրում | 1000 | 1000 | 5000 | 5000 |
| 90 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 4000 | 4000 | 8000 | 8000 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | | | |
| 92 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 93 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 10000 | 10000 |
| 94 | Գեներատորի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 10000 | 10000 |
| 95 | Գեներատորի վերանորոգում | 5000 | 5000 | 10000 | 10000 |
| 96 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 8000 | 8000 |
| 97 | Մեկնարկիչի վերանորոգում | 5000 | 5000 | 10000 | 10000 |
| 100 | Բռնկման կոճղեքի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 7000 | 7000 |
| 102 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում | 4000 | 4000 | [redacted] | |
| 104 | Ազդանշանի հանում և տեղադրում | 1000 | 1000 | 2000 | 2000 |
| 105 | Ապակեմաքրիչի շարժիչի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 8000 | 8000 |
| 106 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 1000 | 1000 | 2000 | 6000 |
| 107 | Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում | 45000 | 45000 | 60000 | 60000 |
| 108 | Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում | 20000 | 20000 | 40000 | 40000 |
| 109 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 2000 | 2000 | 3000 | 3000 |
| 110 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 111 | Վառոցքի մոմերի փոխարինում | 1500 | 1500 | 15000 | 10000 |
| 112 | Կոնդիցիոների լիցքավորում | [redacted] | | 18000 | 18000 |
| | **11. Այլ ծառայություններ** | | | | |
| 114 | Ավտոմեքենայի լվացում | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 116 | Անվադողի վերանորոգում | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 117 | Անիվի բալանսավորում | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 118 | CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ -ի համար* | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 119 | Խառատային աշխատանքներ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 120 | Փականագործի աշխատանքներ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 121 | Քարշակի ծառայություն *գին 1կմ, համար* | 500 | 500 | 500 | 500 |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | ՎԱԶ 2106 | ՎԱԶ 21214 | Նիսան Տեանա | Մերսեդես |
| | **1.Շարժիչ** | | | | |
| 1 | Բարձիկ | 3000 | 3600 | 75000 | 45000 |
| 2 | Շարժիչի գլխիկի միջադիր | 2400 | 2400 | 18000 | 10000 |
| 3 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 5000 | 5000 | 20000 | 15000 |
| 4 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 20000 | 20000 | 100000 | 80000 |
| 5 | Շարժիչի փականի դուրս մղող | 2400 | 2400 | 6000 | 9000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Շարժիչի փական ներս մղող | 2400 | 2400 | 6000 | 9000 |
| 7 | Շարժիչի փականի խցուկ | 1200 | 1200 | 2000 | 2000 |
| 8 | Ծնկաձև լիսեռ | 65000 | 70000 | 200000 | 150000 |
| 9 | Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի | 1200 | 1200 | 10000 | 10000 |
| 10 | Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի | 1200 | 1200 | 10000 | 10000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 4800 | 4800 | 25000 | 25000 |
| 12 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 4800 | 4800 | 25000 | 25000 |
| 14 | Մխոց | 6000 | 6000 | 25000 | 20000 |
| 15 | Մխոցային օղակներ | 9600 | 9600 | 60000 | 60000 |
| 16 | Ատամնանիվ | 3600 | 3600 | 12500 | 12000 |
| 18 | Շղթա | 6000 | 6000 | 18000 | 85000 |
| 19 | Հիդրոձգան | [redacted] | 12000 | 24000 | 24000 |
| 20 | Հրիչ | 1500 | 1500 | [redacted] | 6000 |
| 21 | Հիդրոհրիչ | [redacted] | 7500 | 12000 | 8000 |
| 22 | Բաշմակ | 3000 | 3000 | 10000 | 8000 |
| 23 | Հանգստարար | 2400 | 2400 | 12000 | 12000 |
| 24 | Թափանիվ | 15000 | 15000 | 70000 | 70000 |
| 25 | Թափանիվի պսակ | 9000 | 9000 | 35000 | 35000 |
| 27 | Շկիվ | 10000 | 25000 | 80000 | 80000 |
| 28 | Շարժաթև | 4800 | 4800 | 60000 | 60000 |
| 29 | Կարտերի միջադիր | 1200 | 1200 | 15000 | 15000 |
| 30 | Միջադիր | 2400 | 2400 | 10000 | 10000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | |
| 31 | Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր* | 3500 | 3500 | 3500 | 3500 |
| 32 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր* | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 33 | Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր* | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 34 | Յուղի զտիչ | 1800 | 1800 | 6000 | 6000 |
| 37 | Վառոցքի մոմ | 2000 | 2000 | 14000 | 9000 |
| 38 | Խառնարակի վերանորոգման հավաքածու | 7000 | [redacted] | | |
| 39 | Ինժեկտորի ֆորսունկա | [redacted] | 15000 | 20000 | 100000 |
| 40 | Վառելանյութի մղիչ | 15000 | 22000 | 30000 | 150000 |
| 41 | Վառելանյութի զտիչ | 1500 | 3000 | [redacted] | 30000 |
| 42 | Վառելանյութի փողրակ | 2400 | 2400 | 8000 | 8000 |
| 44 | Օդի զտիչ | 2400 | 1200 | 18000 | 20000 |
| 45 | Ջերմաստիճանային տվիչ | 2400 | 2400 | 5000 | 20000 |
| 46 | Յուղի տվիչ | 2400 | 2400 | 5000 | 12000 |
| 47 | Բաշխիչ լիսեռի տվիչ | [redacted] | 4500 | 35000 | 20000 |
| 48 | Օդի ծախսի տվիչ | | 30000 | 85000 | 60000 |
| 49 | Արագաչափի տվիչ | | 5500 | 45000 | 45000 |
| 50 | Հովհարի տվիչ | 2400 | 2400 | 18000 | 18000 |
| 51 | Ջրի տվիչ | 2000 | 2000 | 18000 | 18000 |
| 52 | Բենզոբաքի տվիչ | [redacted] | 8000 | 25000 | 25000 |
| 54 | Մարման ընթացքի տվիչ | | 6000 | [redacted] | 35000 |
| 55 | Ղեկավարման համակարգիչ | | 115000 | 280000 | 280000 |
| 57 | Դրոսելային փականի տվիչ | | 3600 | 25000 | 25000 |
| 58 | Թթվածնի տվիչ | | 25000 | 50000 | 45000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | |
| 59 | Հովհար | 18000 | 24000 | 50000 | 45000 |
| 60 | Ռադիատոր | 22000 | 30000 | 90000 | 75000 |
| 61 | Ընդարձակող բաք | 2400 | 3600 | 18000 | 15000 |
| 62 | Ռադիատորի փողրակ | 2400 | 2400 | 6000 | 6000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 63 | Թերմոստատ | 8000 | 8000 | 25000 | 25000 |
| 64 | Ջրի պոմպ | 7000 | 7000 | 45000 | 45000 |
| 65 | Սառեցման հեղուկ *1 լիտր* | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 66 | Հոլովակ | [redacted] | [redacted] | 12000 | 12000 |
| 67 | Փոկ | 2000 | 2000 | 30000 | 15000 |
| 68 | Ծորակ | 3000 | 3000 | 8000 | 8000 |
| 69 | Խլարարի ներդիր | 600 | 600 | 2400 | 2400 |
| 70 | Խլարարի կախոց | 1200 | 1200 | 2400 | 5000 |
| 72 | Անուր (խամուտ) | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 73 | Խլարար | 15000 | 18000 | 120000 | 55000 |
| 75 | Վառարանի ռադիատոր | 12000 | 12000 | 90000 | 85000 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | |
| 76 | Կցորդման բանվորական գլան | 7000 | 7000 | [redacted] | 36000 |
| 77 | Կցորդման գլխավոր գլան | 9600 | 9600 | [redacted] | 45000 |
| 79 | Կցորդման տանող սկավառակ | 20000 | 20000 | [redacted] | 50000 |
| 80 | Կցորդման տարվող սկավառակ | 9000 | 9000 | [redacted] | 40000 |
| 81 | Կցորդման առանցքակալ | 5000 | 5000 | [redacted] | 30000 |
| 82 | Կցորդման փողրակ | 2400 | 2400 | [redacted] | 12000 |
| 83 | ՓՏ-ի առջևի խցուկ | 1000 | 1000 | 6000 | 10000 |
| 84 | ՓՏ-ի հետևի խցուկ | 1200 | 1200 | 6000 | 10000 |
| 85 | ՓՏ-ի առանցքակալ | 4800 | 4800 | [redacted] | 15000 |
| 86 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 24000 | 24000 | [redacted] | 60000 |
| 87 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | 30000 | 30000 | [redacted] | 60000 |
| 88 | ՓՏ-ի եղանիկ | 3600 | 3600 | [redacted] | 30000 |
| 89 | ՓՏ-ի ատամնանիվ | 18000 | 18000 | [redacted] | 30000 |
| 90 | Համաժամիչ | 4800 | 4800 | [redacted] | 20000 |
| 91 | Մուֆտ | 10000 | 10000 | [redacted] | 30000 |
| 92 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 1200 | 1200 | [redacted] | 18000 |
| 93 | ԱՓՏ-ի զտիչ | [redacted] | [redacted] | 24000 | 20000 |
| 94 | Տրանսմիսիոն յուղ, *1 լիտր* | 2700 | 2700 | [redacted] | 6000 |
| 95 | ԱՓՏ յուղ, *1 լիտր* | [redacted] | [redacted] | 12000 | 12000 |
| 96 | Հերմետիկ | 3000 | 3000 | 3600 | 3600 |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | |
| 97 | Բաշխիչ տուփի խցուկ | | 1000 | [redacted] | [redacted] |
| 98 | Բաշխիչ տուփի առանցքակալ | | 4800 | [redacted] | [redacted] |
| 99 | Բաշխիչ տուփի ատամնանիվ | | 18000 | [redacted] | [redacted] |
| 100 | Կարդանային լիսեռ | 60000 | 72000 | [redacted] | 150000 |
| 101 | Էլաստիկ մուֆտ | 5300 | 5300 | [redacted] | 25000 |
| 102 | Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ | 4800 | [redacted] | [redacted] | 25000 |
| 103 | Կարդանային լիսեռի խաչուկ | 5000 | 6000 | [redacted] | 15000 |
| | **6. Առջևի և հետևի կամրջակներ** | | | | |
| 105 | Ռեդուկտոր | 110000 | 110000 | [redacted] | 200000 |
| 106 | Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ | 55000 | 55000 | [redacted] | 80000 |
| 107 | Դիֆֆերենցիալ | 20000 | 20000 | [redacted] | 80000 |
| 108 | Դիֆֆերենցիալի սատելլիտ | 5000 | 5000 | [redacted] | 45000 |
| 109 | Տանող ատամնանիվի խցուկ | 1200 | 1200 | [redacted] | 10000 |
| 110 | Տանող ատամնանիվի առանցքակալ | 4800 | 4800 | [redacted] | 10000 |
| 111 | Դիֆֆերենցիալի առանցքակալ | 4800 | 4800 | [redacted] | 10000 |
| 112 | Կիսասռնի | 24000 | 39000 | [redacted] | 60000 |
| 113 | Կիսասռնու առանցքակալ | 3600 | 3600 | [redacted] | 25000 |
| 115 | Կիսասռնու խցուկ | 1000 | 1000 | [redacted] | 8000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **7. Կախոց** | | | | |
| 117 | Տրավերս | 25000 | 120000 | 180000 | 100000 |
| 119 | Ձախ կամ աջ հոդակապ | [redacted] | 66000 | 60000 | 40000 |
| 120 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | [redacted] | 1500 | 24000 | 12000 |
| 121 | Անվակունդ | 15000 | 15000 | 120000 | 80000 |
| 122 | Անվակունդի խցուկ | 600 | 600 | [redacted] | 6000 |
| 123 | Անվակունդի ներքին առանցքակալ | 2000 | 3600 | [redacted] | 15000 |
| 124 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 2000 | 3600 | [redacted] | 15000 |
| 129 | Զսպանակ | 9600 | 9600 | 55000 | 20000 |
| 130 | Առջևի հարվածամեղմիչ | 10000 | 10000 | 120000 | 60000 |
| 132 | Հարվածամեղմիչի վռան | 600 | 600 | [redacted] | 12000 |
| 133 | Ներքևի լծակ | 9600 | 9600 | 90000 | 30000 |
| 134 | Ներքևի լծակի վռան | 1000 | 2000 | 18000 | 15000 |
| 135 | Վերևի լծակ | 9600 | 9600 | [redacted] | 30000 |
| 136 | Վերևի լծակի վռան | 1000 | 1000 | [redacted] | 15000 |
| 137 | Գնդե հոդակապ | 5000 | 5000 | 15000 | 15000 |
| 139 | Առջևի կայունարարի վռան | 1200 | 1200 | 6000 | 8000 |
| 142 | Հետևի ցնցամեղմիչ | 10000 | 10000 | 55000 | 55000 |
| 143 | Հետևի մետաղածող (շտանգա) | 6000 | 6000 | [redacted] | 20000 |
| 144 | Հետևի մետաղածողի (շտանգա) վռան | 600 | 600 | [redacted] | 10000 |
| 146 | Աջ կամ ձախ ձգան | 10000 | 10000 | 25000 | 18000 |
| 147 | Ծայրակալ | 3600 | 3600 | 28000 | 15000 |
| 148 | Ձգան մեջտեղի | 10000 | 17000 | [redacted] | 20000 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | | | | |
| 149 | Ղեկային կալուն | 50000 | 50000 | 350000 | 200000 |
| 152 | Ճոճանակ | 6600 | 6600 | [redacted] | 25000 |
| 153 | Ճոճանակի վռան | 1000 | 1000 | [redacted] | 12000 |
| | **9. Արգելակային համակարգ** | | | | |
| 154 | Գլխ. գլան | 9600 | 9600 | 65000 | 95000 |
| 156 | Վակուումային ուժեղարար | 20000 | 20000 | 120000 | [illegible]50000 |
| 157 | Բանվ. գլան | 3000 | 3000 | [redacted] | 35000 |
| 159 | Արգելակային փողրակ | 2400 | 2400 | 18000 | 10000 |
| 160 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 5500 | 5500 | 45000 | 50000 |
| 161 | Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 11000 | 11000 | 30000 | 40000 |
| 162 | Առջևի արգելակային սկավառակ | 15000 | 15000 | 85000 | 50000 |
| 163 | Հետևի արգելակային սկավառակ | [redacted] | | 85000 | 60000 |
| 164 | Հետևի արգելակային թմբուկ | 15000 | 15000 | [redacted] | |
| 164 | Ձեռքի արգելակի ճոպան | 5300 | 5300 | 30000 | 30000 |
| 165 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | | | |
| 166 | Գեներատոր | 66000 | 66000 | 260000 | 160000 |
| 167 | Գեներատորի դիոդային կամրջակ | 7000 | 7000 | 30000 | 30000 |
| 168 | Գեներատորի ռելե | 3600 | 3600 | 50000 | 25000 |
| 169 | Գեներատորի առանցքակալ | 1200 | 1200 | 10000 | 9000 |
| 170 | Ստարտեր | 48000 | 48000 | 200000 | 1[illegible]0000 |
| 171 | Ստարտերի ռելե | 1600 | 1600 | 12000 | 20000 |
| 172 | Ստարտերի ածուխ | 4000 | 4000 | 15000 | 15000 |
| 173 | Բենդեքս | 10000 | 10000 | 30000 | 18000 |
| 174 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 10000 | 10000 | 24000 | 24000 |
| 180 | Լամպ | 2400 | 2400 | 6000 | 6000 |
| 181 | Էլեկտրական անջատիչ | 2400 | 2400 | 10000 | 10000 |
| 182 | Էլեկտրական տվիչ | 15000 | 25000 | 10000 | 10000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 184 | Բռնկման կոլպեք | 7000 | 7000 | 120000 | | 80000 |
| 185 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 50000 | 50000 | 100000 | | 100000 |
| 186 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 40000 | 40000 | 80000 | | 80000 |
| 187 | Վառոցքային լարերի խուրց | 6600 | 6600 | [redacted] | | 30000 |
| 188 | Վառոցքի մոմի ծայրակալ | [redacted] | | 30000 | | 30000 |
| 190 | Վազքաչափի ճոպան | 5300 | 5300 | [redacted] | | |
| 192 | Ազդանշան | 3600 | 3600 | 12000 | | 12000 |
| 193 | Ապակելվացիչ | 18000 | 18000 | 25000 | | 30000 |
| 194 | Ապակելվացիչի շարժիչ | 15000 | 15000 | 25000 | | 25000 |
| 195 | Դռների կենտրոնական փական | 6000 | 6000 | 25000 | | 25000 |
| 196 | Ազդանշանային համակարգ | 25000 | 25000 | 45000 | | 45000 |
| 197 | Մագնիտոլա | 48000 | 48000 | 48000 | | 48000 |
| 198 | Էլեկտրաամբարձիչ | 9600 | 9600 | 45000 | | 45000 |
| 199 | Էլեկտրաամբարձիչի շարժիչ | 20000 | 20000 | 35000 | | 35000 |
| 200 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1ղ/մ վերանորգման համար* | 3600 | 3600 | 3600 | | 3600 |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | 20.12.2016թ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀԱրագածոտնի մարզպետարան
ՀՀԱրագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
ՀՎՀՀ 05004247
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար
Հ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ
Ք.Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
HSBC բանկ
Հ/հ 002-121[illegible]30-001
ՀՎՀՀ 001[illegible]1374
<<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Հովսեփյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2
<<22>> Հունվարի 2016 թ. կնքված
N ՀՀ-ԱՄ-ԱՎՏՈ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 206 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | 150000 | 200000 | 350000 | 450000 | 550000 | 600000 | 650000 | 700000 | [illegible] | 900000 | 990000 | 990000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀԱրագածոտնի մարզպետարան
ՀՀԱրագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
ՀՎՀՀ 05004247
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար
Հ.Փիրոզյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ
Ք.Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
HSBC բանկ
Հ/հ 002-121680-001
ՀՎՀՀ 00131374
<<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված 3*
*<<22>> Հունվարի 2016 թ. կնքված*
*N ՀՀ-ԱՄ-ԱՎՏՈ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ________________________

______________________________

հվհհ ________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ________________________

______________________________

հվհհ________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ___________________________________________________
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_______________________________________________ և ______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*<<22>> Հունվարի 2016 թ. կնքված*
*N ՀՀ-ԱՄ-ԱԿՏՈ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ---------------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ------------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած նեկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն